ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
Մանկավարժահոգեբանական աջակցման մասնախմբի նիստի

Նիստը կայացել է 2026 թվականի հունվարի 23-ին:

Նիստին մասնակցել են մանկավարժահոգեբանական աջակցման մասնախմբի բոլոր անդամները:

Օրակարգում՝

1. Նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ Լ. Սեյրանյան)
2. Նախորդ նիստի ժամանակ կայացված որոշումների կատարման մասին մասնախմբի ղեկավարի զեկուցում:
3. ԱՈՒՊ-ների երկամսյա քննարկումների նախնական ժամանակացույցի ներկայացում:
4. Ամենօրյա աշխատանքների արձանագրում:

Լսեցին՝

1. Մանկավարժահոգեբանական աջակցման մասնախմբի ղեկավար՝ Լ. Սեյրանյանը ներկայացրեց նիստի օրակարգը՝ բաղկացած 5 հարցից:

Լսեցին՝

2. Մ/մ ղեկավար Լ. Սեյրանյանը ներկայացրեց նախորդ նիստի որոշումների կատարման մասին զեկույց, որտեղ նշեց, որ ինչպես և որոշվել էր մասնախմբի անդամները ակտիվ ներգրավված են եղել և աջակցություն են ցուցաբերել ուսուցիչներին և դաստիրակներին պլանավորված միջոցառումների իրականացման գործընթացում և դրա վառ ապացույցներից մեկը հայոց բանակի կազմավորման տոնին նվիրված միջոցառումն էր: Նշվեց, որ 2-րդ կիսամյակի աշխատանքները կազմակերպել և մեկնարկել են սահմանված ժամկետներում:

Լսեցին՝

3. Մ/մ ղեկավար Լ. Սեյրանյանը ներկայացրեց ԱՈՒՊ-ների երկամսյա քննարկման ժամանակացույցի նախագիծը, որը նախատեսվում է համաձայնեցնել տնօրինության հետ, և հորդորեց մ/մ անդամներին պատշաճ կերպով մասնակցել նախատեսված քննարկումներին:

Լսեցին՝

4. Մ/մ ղեկավար Լ. Սեյրանյանը մասնագետներին ներկայացրեց աշխատանքների ամենօրյա պլանի կիրառման օրինակը և ձևաթղթի վարման առանձնահատկությունները՝ կարևորելով աիրականացված շխատանքների պատշաճ արձանագրումը:

Որոշում է

1. Հաստատել մասնախմբի հունվարի 23-ի նիստի օրակարգ:
2. Ընդունել ի գիտություն նախորդ նիստի որոշումների կատարման վերաբերյալ մասնախմբի ղեկավարի զեկուցումը՝ արձանագրելով, որ իրականացված աշխատանքների արդյունքները եղել են գոհացնող:
3. ԱՈՒՊ-ների երկամսյա քննարկման ժամանակացույցի համաձայն ապահովել մասնակցություն բոլոր հանդիպումներին:

4. Մ/մ անդամերը որոշեցին 2-րդ կիսամյակում իրականացրած անհատական և խմբային աշխատանքների ամենօրյան գրանցումն իրականացնել մասնախմբի ղեկավարի առաջարկած ձևաթղթում:

Նախագահ՝ **Լ. Սեյրանյան**

Քարտուղար՝ **Գ. Եսայան**

27.01.2026